

3128



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 18 » 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 066 - 25

Նախաձեռնող՝

«Էկո Բիլդինգ» ՍՊԸ
Ք. Վայք, Երկրաբանների փ. 7

Գործունեությունը՝

Տաթև համայնքի խողր բնակավայրում
դպրոցի կառուցում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 066 - 25

« 18 » Տարբեր 2025թ.

**Խոտ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «Էկո Բիլդինգ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն (այսուհետ՝ ՇՄԱԳ)
Գործունեության կատեգորիա՝ «Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ Սյունիքի մարզ, Տաթև համայնք,
Խոտ բնակավայր

Ներածական մաս. «Էկո Բիլդինգ» ՍՊԸ - ի կողմից նախատեսվում է Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ բնակավայրի 1-ին փողոց, 97 հողամաս հասցեում դպրոցի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքն իրենից ներկայացնում է օժանդակ շինություններով ծանրաբեռնված, 5 – 9.5 % թեքությամբ հարթ ռելիեֆով հողամաս: Տարածքի ամենամոտ շենք շինությունները տեղակայված են նախատեսվող գործունեության տարածքի եզրագծից մոտ 70-100 մմ հեռավորության վրա:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը մինչև 8.0 մետր խորությամբ չեն բացահայտվել:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 1.20376 հա,
- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 3244,4 մ²,
- կանաչապատման մակերեսը՝ 4147 մ²,



- ռետինե մակերևույթից ռետինե խաղահրապարակ՝ 924 մ²,
- բարեկարգման մակերեսը՝ 1228,24 մ²:

Համաձայն նախագծի՝ դպրոցն իրենից ներկայացնում է հակասեյսմիկ կարաններով բաժանված չորս մասնաշենք: Առաջին մասնաշենքը եռահարկ է, առանց նկուղային հարկի: Այստեղ տեղադրված են տարրական դասարաններ, ներառական դասարան, մարզասրահ, խաղասենյակ, շախմատի դասարան և այլն: Երկրորդ մասնաշենքի առաջին հարկում նախատեսված է մուտքային հարթակ՝ թեքուղիներով, ինչպես նաև նախասրահ, հանդիսությունների դահլիճ, ճաշարան, տնօրենի աշխատասենյակ, մեկ վերելակ: Երկրորդ հարկում նախատեսված են միջին և տարրական դասարանների ուսումնական ղեկավարների աշխատասենյակները, տարբեր կաբինետներ: Երրորդ հարկում նախատեսված է նաև գրադարան և լինգվաֆոնային կաբինետ: Կիսանկուղային հարկում նախատեսված է ճաշարան իր խոհանոցով և օժանդակ սենքերով: Երրորդ մասնաշենքը՝ միջին և ավագ դպրոցն է իր դասասենյակներով, կաբինետներով և սանհանգույցներով: Մասնաշենքը եռահարկ է, մի հատվածում միայն երկհարկանի է: Այստեղ են գտնվում քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության կաբինետները: Նկուղային հարկում նախատեսված են սանհանգույցներ, հրաձգարան և օժանդակ տարածքներ:

Դպրոցային չորրորդ մասնաշենքը ունի ուղղանկյան ձև, մեկ հարկանի առանցքային չափերով մարզադահլիճ է: Նկուղային հարկ չունի:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ դպրոցն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Դպրոցի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Նախատեսվում է դպրոցի տանիքին տեղադրել 150 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 252 հատ 595 Վտ հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներ: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոկոունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավագ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի շրջանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային



- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն՝ ՇՄԱԳ հաշվետվության, նախատեսվում է Սյունիքի մարզի Խոտ բնակավայրում դպրոցի կառուցվում և շահագործում ՀՀ-ում գործող օրենսդրության և ոլորտին առնչվող իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Նորատունկ բուսականության խնամքը շահագործման ընթացքում կիրականացվի դպրոցի կողմից, կիրականացվի նորատունկ գոտու մշտադիտարկումները, որի ընթացքում կպաշտպանվեն շահագործման շահագործման ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Սյունիքի մարզպետարանը, Տաթևի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Սյունիքի մարզի Խոտ բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջներին, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ անհրաժեշտության դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանման նպատակով:



ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Էկո Բիլդինգ» ՍՊԸ - ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Ռուզան Մակինյան